

## ՈՒԿՐԱԽՆԱ

Առողջապահության բնագավառում միջգերատեսչական համագործակցության համաձայնագիրը ստորագրվել է 1996թ. մայիսի 14-ին, Երևանում:

1999թ. դեկտեմբերի 23-ին Երկու երկրների կառավարությունների միջև ստորագրվել է նաև դեղագործական արտադրության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր:

Միջգերատեսչական համաձայնագիրը ստորագրող կողմերն են ՀՀ առողջապահության նախարարությունը և Ուկրաինայի առողջապահության նախարարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- ուղղակի կապերի ընդլայնում առողջապահական, գիտական և այլ հաստատությունների միջև,
- մասնագիտական օգնություն չափահաս բնակչությանը և երեխաներին,
- դեղաբանություն և բժշկական տեխնիկա,
- գիտական և բժշկական կադրերի պատրաստում, համատեղ գիտական հետազոտություններ,
- առողջապահության բնագավառում վերլուծական-տեղեկատվական համակարգերի ստեղծում, արտակարգ իրադրությունների մասին հետաքրքրություն ներկայացնող գործնական տեղեկատվության փոխանակում,
- առողջապահության և բժշկագիտության տնտեսավարում,
- սանատոր-առողջարանային բուժում,
- Երկու երկրների բարձրագույն և միջնակարգ մասնագիտական բժշկական հաստատությունների դիպլոմների փոխադարձ ճանաչում,
- համեմատելի աշխատանք ուսումնական ծրագրերի բարելավման ուղղությամբ, ուսանողների վճարովի հիմունքներով փոխանակում,
- մասնագետների ստաժավորում, կատարելագործում՝ վճարովի հիմունքներով,
- վճարովի հիմունքներով միմյանց հիվանդների խորհրդատվությունների և բուժման կազմակերպում,
- իրենց երկրներում կազմակերպվող կոնֆերանսների, համագումարների և նմանատիպ այլ միջոցառումների մասին փոխադարձ տեղեկացում,
- արտակարգ իրավիճակների դեպքում փոխադարձ անհետաձգելի բուժական-խորհրդատվական օգնություն,
- համագործակցություն սանիտար-հակահամաճարակային ծառայությունների միջև, փորձի և տեղեկությունների փոխանակում: